

Օ Բ Ե Ր Լ Ե Ն Ե Ր Ը

Վ Ե Պ

Թ ը ն է Բ ա զ ե ն ի

III

Առաջին ընտանեկան ժողովը

Ժամը դանդաղութեամբ հետևեց զանգի ձայնին որ նրան կանչում էր: Այդ վայրկենին ամեն ինչ նրա համար ուրախութիւն էր: Տարիներից յետոյ վերտանին նրա առաջ բացւում էր ընակութեան, աշխատանքի և երջանկութեան մի աշխարհ: Կործածը լի էր անուշ յուզմունքով և մտքերը դառնում էին նրա գլխում, ինչպէս ձկների մի խումբ, որոնք անցնում են ջրի մակերևոյթից, մինչդեռ ուրիշները վարեց հետևում են նրանց: Եւ այդ վերջիններն էին ընտանեկան կեանք, հասարակական դերի իր բոլոր յարմարութիւններով, երբ նա կը կարողանայ գեղեցկացնել մեծացնել ամեն ինչ իր շուրջը: Զրվէժի մօտից ծառուղիով անցնելիս նա քնքոյշ զգացմունքով դիտում էր իրանց տունը, հայրական տունը: Նա պատկառանքով բարձրացաւ սանդուղքի աստիճանները, յիշելով՝ որ պապն է շինել այդ, որին և պատկանում է ամբողջ կալուածը, բացի տախտակի գործարանից և աշխատանոցից:

Տան մի ճակատից միւսը տանող միջանցքը կտրելով՝ նա արեց վերջին փուռը դէպի ձախ: Սեղանատունը միակ սենեակն էր, որ ժողէֆ Օրերէի ճաշակի և ցուցմունքների համեմատ «վերանորոգուած էր»: Մինչդեռ դահլիճում, բիլիարդանոցում և միւս սենեակներում երևում էին պապի բերած կահկարասիներ Ուտրեխտի գեղին կամ կանաչ մախմուրով պատած, և ակածուի փայտից շինած: Դրա հակառակ ժողէֆ Օրերէի ճաշակը, կամ ինչպէս ինքն էր ասում իր ստեղծա-

գործութիւնը աչքի էր ընկնում գծերի կատարեալ բացակայութեամբ Գոյնը բռնում էր ոճի տեղ: Պատերը ծածկուած էին թղկենու շերտաւոր նուրբ տախտակներով մոյզ կապոյտ, մուգ շուշանագոյն տեղ-տեղ, մոխրագոյն, մուգ-վարդագոյն, որոնք բարձրանում էին մինչի յարկի կէսը: Վերևում առաստաղի ներկած գերանների հետ միանալով չորս քառակուախներ, զարդարուած պատկերներով ներկայացնում էին իրիս, միաթերթ վարդեր, կարմիր շուշան, աղաւանարօտ: Ամեն տեղ, ուր այդ հնարաւոր էր, ուղիղ գիծը զո՞ն էր բերուած: Դոներից ցցուած մասերը ձևացնում էին այնպիսի գալարուող գծեր, որոնք լիանի ցոլունների պէս չգիտեա ինչու իրարից փախչում էին խելայելորէն: Լայն լուսամուտների շրջանակները ալիքածե գալարներ ունէին: Եղենու ոլորուն փայտից շինուած աթոռները բերուած էին Վեհեննայից: Ամբողջը որոշ բնաւորութիւն չունէր, այլ մեղմ լոյսի մի հմայք, և բուսական աշխարհի նմանողութիւն: Կարծէք մի ջահիլ ու երջանիկ ամուսինների սեղանատուն լինէր այս:

Սովորական չորս սեղանակիցները, որ ժանը պիտի տեսնէր այնտեղ ուրախութեան այս պատկերին չէին համապատասխանում: Նրանց ու սեղանատան զարդերի մէջ ներդաշնակութիւն չկար Նրանցից իւրաքանչիւրը անխախտ կերպով բռնում էր նոյն տեղը, բառակուսի սեղանի շուրջը, համաձայն փոխաղարձ խորին հակակրութեան ու համակրութեան:

Լուսամուտից դէպի ձախ տիկին Մոնիկ Օբերլէն էր, բոլորովին մօտիկ շեղակտուր փեղկերին, որոնք արտացոլում էին նրա թիկունքին, իրանց ստուերագծերով: Բարձրահասակ ու նիհար այդ կինը իր գունատ դէմքով, որ ժամանակին լիքն էր եղել ու թարմ, իսկ այժմ կնճռու ու վտիտ, այնպիսի արտայայտութիւն ունէր, որ կարծես շարունակ լսում է մի հատիկ խօսք: «Դու մեղաւոր ես!»:

Երբ նրա կարճատես, բայց խիստ անուշ աչքերը անցողակի դառնում էին նոր հիւրին, միւնոյն ժամանակ նրա շըրթիւնքների վրայ երեւում էր մի եթերային ժափտ, պատրաստ էր վայրկենապէս քաշուել ու անյայտանալ: Նա երկար էր նայում միայն այն ժամանակ, երբ արդէն գիտէր, որ ոչինչ նրան յետ չի մղի կամ արհամարհի: Այն ժամանակ նրա հայեացքի մէջ կարելի էր տեսնել մի պայծառ մտածողութիւն, խիստ բարի սիրտ, որ դեռ ընդունակ էր յափշտակութիւնների և երիտասարդական յոյզերի:

Անհոգ մանկութիւնը նրան բնաւ չէր պատրաստել այն դերի համար, որ ապագայում վիճակուեց նրան: Այն ժամանակ

նա կոչւում էր Մոնիկ Բեհլեր, Օբերնէի հինաւուրց Բէհլեր ընտանիքից։ Հայրական տան բարձրութիւնից, որ փոքրիկ քաղաքի ամրութիւնների վրայ իշխում էր եռանկիւնի կտուրով։ Նա տեսնում էր իր առաջ անհուն դաշտը։ Պարտէզը՝ ուր նա խաղում էր, լի էր տանձենիներով, մշտագլաւր, խաչուած մացաներով, սրափուշ ծաղիկներով, ու միայն մի երկաթեայ ցանցով էր բաժանուած հասարակաց զրօսավայրից, որ հաստատուած էր հին պարիսպների տեղում։ Այսպիսով մանուկ օրերից նրա հոգում ամեն օր տպաւորում էր Ալզասի պատկերը և այս հայրենիքի սէրը, որ մի ժամանակ այնպէս երջանիկ էր իր գեղեցկութեամբ, իր խաղաղութեամբ, ազատութեամբ, իր գիւղերով որոնց անունները նա գիտէր, որոնց խաղողի ողկոյզները ցաք ու ցրիւ արտերի մէջ նա կարող էր նկատել։ Մըսնցից դուրս Մոնիկ Բէհլերը ուրիշ ոչինչ չգիտէր։ Միայն տարին մի անգամ երկու ամսով նա իւրայինների հետ հեռանում էր Օբերնէից, գնում էր Հէյդեներուի Սէնտ-Օդիլի անտառներում ամառն անցկացնելու։ Մի անգամ նա առիթ էր ունեցել անցնել Վոժի լեններից իր ամուսնութիւնից մի տարի առաջ Դոմերեմի ուխտ գնալու համար Լոթարինգիայում։ Այդ առթիւ նա երեք օր յափշտակութեան մէջ էր, եւ տիկին Օբէրլէն միշտ յիշում էր այդ երեք օրը որպէս իր կեանքի ամենաանխառն ուրախութեան ժամանակ, որի մասին նա ասում էր՝ «իմ ճանապարհորդութիւնը ֆրանսիայում»։ Նա մնացել էր նոյն միամիտր։ Ալշէյմի իր մենաւորութեան մէջ նա պահպանել էր մանկութեան թեթև յոյզերը, միևնոյն ժամանակ անկեղծութիւնը և իր երկրի, նրա բնակիչների համար մի տեսակ գաղտնի ու յանդուգըն սէր, որ յատուկ է ջահիլ աղջիկներին։ Տեսնելով թէ ինչպէս իր ամուսինը յացում է Ալզասի գերմանական կուսակցութեանը, նա տանջուել էր աւելի քան մի ուրիշը կը տանջուէր ալզասուհու իր վիրաւորուած հպարտութեան և մանաւանդ իր մայրենի սիրոյ համար։ Իր զաւակները հեռացնում էին նրանից նոյն պատճառով, որով նա ինքը հեռացած էր իր ամուսնուց։ Իր ճակատի կնճիռներից իւրաքանչյուրը կարող էր մի անոն ունենալ, և ցաւ, որ ակօսել էր նրանց, և՝ արհամարհուած բարութիւն, և՝ անօգուտ մնացած հոգացողութիւններ, և՝ հայրենիքի անարգանք, և՝ անջատումն իր զաւակներից, ինչպէս և ունայնութիւն սիրոյ այն գանձի, որ նա կուտել էր նրանց համար իր ամբողջ կեանքի ընթացքում թէ որպէս աղջիկ և թէ որպէս ջահիլ կին։ Մրաի զանութիւնը էլ աւելի մեծանում էր նրանով, որ տիկին Օբերլէն շատ լաւ գիտէր ամուսնուն առաջնորդող շարժառիթները։ Ամուսինն այդ լաւ հասկանում էր և

իրան ստորացած էր զգում այս վկայի առաջ առանց կարողանալու նրան մեղադրել և որին չէր էլ կարող չյարգել։ Նրա համար այս կինը մարմնացումն էր այն դատի, որ ինքը ժըխտել էր։ Եւ միշտ երբ ինքն իրան արդարացնելու կարիք էր զգում, և դա յաճախ էր՝ պատահում—նա իր կնոջն էր դիմում, և նրա լուս յանդիմանութեան առաջ, դարձեալ նրա վրայ էր զայրանում։ Թսան տարուց ի վեր և ոչ մի անգամ նա չէր կարողացել կնոջ շըթունքներից կորզել մի խօսք յօգուտ Ալզասի գերմանացման։

Ոյժի առաջ ընկճուղ այս թոյլ կինը, սակայն չէր հաշտուում իրողութեան հետ։ Նա իր ամուսնուն հետեւում էր զերմանացի հասարակութեան մէջ և այնտեղ իրան այնպիսի արժանապատեւութեամբ էր պահում, որ ամենքը հասկանում էին նրա բնած դիրքը, բայց և ոչ ոք չէր կարողանում դրա համար նրա դէմ ոխ պահել։ Այսպիսով նա կարողանում էր ոչ միայն արտաքին վայելչութիւնը պահպանել այլև իր ներքինն զգալ տալ։ Զաւակներից զատուած այս մայրը, սակայն անքաժան էր իր ամուսնուց։ Նրանք պահում էին դեռ մինոյն սենեակում ամուսնական զոյգ անկողինը։ Նրանք մշտական ընդհարումներ ունէին, մերթ լոին մի կողմից և մերթ բուռն ու սուր երկու կողմից։ Օբերլէն գիտէր, որ ամուսինը ատում է իր գաղտնատեսութիւնը և իր դատելու եղանակը, բայց և նա հաւատացած էր, թէ ինքը չէ միշտ մեղաւորը։ Այժմ, երբ երեխանները մեծացել էին նա մտածում էր, թէ պէտք կը լինի գերազանցօրէն կարենոր որոշումներ անել նրանց համար, և որ իր երկարատև համբերութիւնից և այնքան զիջողութիւններից յետոյ նա գոյցէ իրաւոնք ունի խօսել և իր ձայնը լսել տալու։

Նրա աջ կողքին միշտ տեղ էր ըսնում պապը, Ֆիլիպ Օբերլէն։ Թանի տարուց ի վեր հացից մի հինգ ըոպէ առաջ սեղանատան դուռը բացւում էր, և ծերունին ներս էր մտնում յենուած իր սպասաւորի ձեռքին, աշխատելով քայլել ուղիղ, հազնուած մուգ բրդի թխագոյն զգեստ, կարմիր ժապաւէնը կոճկատեղին, գլուխը յոգնած ու կախ, արտեանունքները համարեա փակ, իսկ դէմքը ուռուած ու արիւնալի։ Նրան նստացնում էին մոխրագոյն ծածկոցով պատած ականջաւոր բաղկաթուի մէջ յետոյ կապում պարանոցից իր անձեռոցիկը։ Եւ նա սպասում էր մէջքը բաղկաթուին յենուած, սեղանի վրայ գնելով մոմի պէս գունատ ձեռները, որոնց վրայ երեսում էին արիւնատար կապոյտ երակները։ Երբ սեղանակիցները գալիս էին, Ժողեք Օբերլէն սղմում էր նրա ձեռքը, կիւտիէնը նրան համբուրում էր թեթեակի և մանկական ձայնով մի շարք բառնիս, 1905.

ներ ասում: Տիկին Օքերլէն կուանում էր և նրա ճակատին դը-
րօշմում էր իր հաւատարիմ շրթունքները: Մերունին շնորհակա-
լութիւն էր յայտնում նայելով թէ ինչպէս նա նստում մինչդեռ
է, միւսներինչ էր նայում: Յետոյնրանք երկուսով խաչակնքում
էին երեսները, հին Աղասեան սերնդից այս միակ աղօթողնե-
րը: Եւ ապա այս լուակեաց ու գթոս հարևանունին, որ ճանա-
չում էր ծերունու ճաշակը, նրան ճնշում պատճառող որոշ թու-
լութիւնները, որ գիտէր կամնել նրա ցանկութիւնները, բա-
ժին էր տալիս ծերունուն, և նա սկսում էր ուտել զանդաղու-
թեամբ, գֆուարութեամբ շարժելով իր ճնօտի ձգուած չիւերը:
Իր խոհուն գլուխը՝ միշտ յենուած բաղկաթոռին, տակաւին
հսկում էր աւերտած մարմնի մէջ, Այդ գլուխը, մի բեմ էր,
որտեղից մի հատ մարդու հաճոյքի և ցաւի համար անցնում
էին նրանց նախահայրերը, որոնց անունները տալիս էին իր
առաջ: Նա չէր խօսում, բայց յիշում էր:

Երբեմն նա հանում էր իր գրպանից աշակերտական մի
քարետախտակ և մի մատիտ, և նա գրում էր անհաստատ տա-
ռերով երկու երեք բառ, տալիս էր կարդալու իր հարևանու-
նուն: Այստեղ տախտակի վրայ նա սովորաբար ուղղում էր մի
սխալ ասուած բան, յիշեցնում էր մի մոռացուած տարեթիւ
ընդունում կամ ժխտում էր սեղանի միւս ծայրին արտասա-
նուած խօսքեր: Յաճախ իր ծանրացած արտեանունքների
թարթելուց իմանում էին որ նա հետաքրքրուած է, կամ յու-
զուած: Բայց դա միայն մի վայրկեան: Կեանքը վերստին թաղ-
ում էր բանտի խորքը, որի փականքը նա ի զուր էր փորձել
տեղահան անել: Գիշերը նորից իջնում էր արտայայտուելու
անկարող նրա մտքի վրայ: Չնայելով որ այս բոլորը սովորա-
կան էր սեղանակիցների համար, այնուամենայնիւ ցաւի և ա-
մբածի այս տեսարանը քարի պէս ծանրանում էր ընտանիքիւ
անդամներից իւրաքանչիւրի սրտի վրայ: Օտարները, որոնց
վիճակւում էր մի երեկոյ սեղանակից լինել Օքերլէ ընտանի-
քին, այդ ծանրազրութիւնը այսպէս չէին զգում, որովհետև
այդպիսի օրերում ծերունին ճիգ չէր անում փշրելու մահուան
և խաւարի այն շղթան, որ ճնշում էր նրան: Ժողեփ Օքերլէն
մինչև վերջին տարիները պէտք էր համարում ներկայացնել
իր հիւրերին հօրը: բայց մի օր վերջինս զրեց քարետախտակի
վրայ հետևեալը. ո՛մչ ոքի մի ներկայացրու ինձ, մանաւանդ
հչ մի գերմանացու. թող բարևեն ինձ և այդքանը բաւական
է»: Որդին պահել էր սակայն ամեն երեկոյ տան ծերունի պե-
տին իր գործարանի ընթացքից տեղեկութիւն տալու սովո-
րութիւնը. այս եսասէր մարդի կողմից սա մի յուզիչ միաք էր:

Ճաշից յետոյ՝ երբ մայր ու աղջիկ անցնում էին սալոնը, նա ծխելով պատմում էր հօրը վերջին պոստով ստացուած թղթերի, ուղարկուած ապրանքի, գնուած ծառերի մասին։ Չնայելով որ Ֆիլիպ Օբերլէն միայն դրամագլխով էր մասնակից իր հիմնած արդինագործութեանը, այնուամենայնիւ նա ինքն իրան երեակայում էր դեռ խորհրդատու և վարիչ։ Նա ուզում էր խօսել թխկնիների, սօճիների, եղենիների և կաղնիների մասին, որոնց մթնոլորտում նա անց էր կացրել յիսուն տարի։ Նա սիրում էր այդ «խորհրդակցութինը» ինչպէս կոչում էր նա, երեկոների այդ զրոյցը, որպէս միակ վայրկեանը ամբողջ օրուայ, երբ նա ինքն իր աշքին դառնում էր ուրիշների կեանքում դեր խաղացող մի մարդ։ Դրանից դուրս նա ոչ այլ ինչ էր, եթէ ոչ մի համր և շարժուն ստուեր, որ քննում էր իր տան անցած դարձածը և որ հազիւ երբեմն ասում էր իր վճիռը։

Որդին մի խոշոր հարցի վերաբերմամբ նրա հետ անհամաձայն էր։ Սեղանի վրայ նստած ուղիղ հօր դէմ ու դէմը, Ժողեփ Օբերլէն կարող էր ի հարկին ձևացնել, թէ ինքը խօսում է կող և աղջկայ հետ։ Նա կարող էր չտեսնելու տալ թէ ինչպէս անհամբերութինից դողդողում են հօր մատները, կամ ինչպէս նա գրում է տիկին Օբերլէի համար։ Բայց նա այն մարդկանցից չէր, որոնք խոյս են տալիս իրանց համար դառն խնդիրներից։ Ինչպէս բոլոր այն մարդիկ; որոնք իրանց կեանքում առիթ են ունեցել մի ծանր վճիռ կայացնել և այդ արել են հոգու խորին յուզմունքով, նա շարունակ վերադառնում էր նոյն գերմանական հարցին։ Ամեն ինչ նրա համար առիթ էր այդ հարցը վերսկսելու, և՛ գովասանքները, և՛ յանդիմանութինները, առաւտեան թերթերի հաղորդած մանր լուրերը կամ խոշոր քաղաքական անցքերը, ցրեչի բերած մի բաց նամակը, Հանովերից, կամ Դրեզդէնից ստացուած տախտակի պատուէրը, Լիւսիէնի արտայայտած ցանկութիւնը ներկայ լինել մի պարահանդիսի։ Նա կարիք էր զգում ինքն իրան փառաբանել իր արածի համար, ինչպէս յաղթուած այն զօրապետները, որոնք բացատրում են իրանց պարտութիւնը այսպէս կամ այնպէս վարուելու անհրաժեշտութեամբ։ Իր հարուստ հոգու բոլոր ոյժերը նա գործ էր դնում խոճի այդ ինդրի վրայ, որ նա համարում էր վաղուց լուծած, որը վէճի պատճառ չէր դառնում ոչ ծերունու կողմից և ոչ էլ այն ճնշուած ու ինքն իրան լուռեան դատապարտած կող կողմից։

Միայն Լիսիէնն էր, որ քաջալերում և պաշտպանու էր հօրը։

Նա այդ անում էր ջահիներին յատուկ վճռականութեամբ, որոնք դատում են առանց խնայելու ծերերի ցաւոտ սիրտը, նրանց յիշողութիւնները, անցեալի հմայքը և առանց հասկանալու իսկ այս բոլորը, որ նրանց թւում է մեռած և լոկ խելքի ենթակայ: Նա քսան տարեկան էր, խիստ հպարտ, բայց անկեղծ բնաւորութեամբ, միամիտ հաւատով դէպի իր անձը, և անզուսազ խառնուածքը տէր. գեղեցկութեան հոչակ ունէր որ միայն կիսով չափ էր ճշմարիտ. բարձրահասակ և հոյեակապ ինչպէս մարդ, նա հօրը նմանում էր լայն գիմագծերով, որ յատուկ է ալզասեան տիպին, և գիրանալու հակամէտ էր երևում: Մարմինը կատարելապէս ձևակերպուած էր և փարթամ, այսպէս որ նրան առաջին անգամ տեսնողները համարում էին մի ջահիլ կին և ոչ աղջիկ: Նրա դէմքը չափազանց բաց էր և դիւրագիւթ:

Ժպտալիս՝ և՛ նրա աչքերը, որոնք աւելի փոքր էին ու նուազ կանաչագոյն քան իր եղօրը, և նրա բերանը ընդունուած էին երկարաւուն ձև: Եւ երբ նա ականջ էր դնում: Հետեւելով որևէ խօսակցութեան, աչքերում կարելի էր կարդալ նրա միտքը: Նա քիչ անգամ էր երազուն: Նրա աշխարհիկ յաջողութիւնները, իր կայտառ բնաւորութիւնից դուրս, վերագրելի էին նրա մի այլ հմայքին, նրա դէմքը ու կարմիր շրթունքների աննման գոյնին դալուկ փայլով շէկ մազերին: Բոցագոյն խոպաններով զարդարուն այդ մազերը այնքան հարուստ և այնքան ծանր էին, որ կոտրում էին սարապի սանտրերը, դուրս պրծնում բորոցներից և քաշ ընկնելով դէպի յետ, նրան ստիպում էին բարձր պահել գլուխը, որոդելով ճակատը լոյսի ցօլքերով, իսկ ծոծրակի վրայ կազմելով մի սոկեզօծ ծալք: Այս բոլորը կիւսինն Օքերէին տալիս էր մի հպարտ աստուածունու գլիքի կեցուածք: Իր բեռի Ուրլիսը նրան ասում էր ծիծաղելով՝ քեզ համբուրելիս ես կարծում եմ թէ գեղձ եմ համբուրում: Նա լաւ էր քայլում, և հմուտ էր գնդախաղի մէջ. նամանաւանդ շատ լաւ լողում էր և յաճախ Բաղեն-Բաղենի թերթերը տպել էին նրա անուան սկզբնատառերը այն յօդուածներում ուր նրանք հոչակում էին «մեր լաւագոյն լողացողները»:

Ֆիզիքական այս դաստիարակութիւնը նրան արգէն հեռացրել էր իր մօրից որ թէև զրօսմաքի խիստ սիրահար էր, բայց միջակ բայլող: Կային և ուրիշ պատճառներ, որոնք այս մայր ու աղջկան անդարձ կերպով բաժանել էին իրարից խորապէս: Եւ դա աղջկայ ստացած դասիարակութիւնն էր Միւնդների գիշերօթիկ վարժարանում, որ գիտական, հանդիսաւոր ու իմաստակ, աւելի ցրուած՝ և նուազ կրօնական, մինչդեռ մայրը

դաստիարակուել էր մասամբ Օքերնէում, մասամբ Ստրասրուր-
գի Մինեօր փողոցի Աստուածամօր կոյսրի մօտ: Բայց ամենից
աւելի նրանց բաժանողը նրանց միջավայրը և յարաբերու-
թիւններն էին: Լիւսիենը հօր պէս փառաէր և նրա պէս դէ-
պի յաջողութիւններ ձգտող, բոլորովին դուրս մնացած մօր
աղղեցութիւնից, եօթ տարի շարունակ յանձնուած գերմանացի
վարժուէինների, ամենից երես տուած, մէկ տեղ շնորհիւ իր
բնաւորութեան հմայքի, ուրիշ տեղ քաղաքական պատճառնե-
րով, կամ նրա հոգին անզիտակցաբար փոխելու միտումով—հին
աղղացիններից բոլորովին տարրեր յատկութիւններ էր ձեռք
բերել: Տուն վերադառնալով, նա էլ չէր հասկանում իր ցեղի
և իր ընտանիքի աւանդութիւնները: Նրա համար բոլոր նրանք
որոնք պաշտպանում էին իրերի նախկին կացութիւնը կամ ցա-
ւում նրանց համար, ինչպէս մայքը, քեռին և իր պապը—մի
անցած շրջանի և անխորհուրդ կարծիքների ներկայացուցիչներ
էին: Եւ նա իսկոյն անցաւ հօր կողմը միւնների դէմ: Բայց
նա տառապում էր և տիրում տեսնելով բոլորովին մօտիկ ի-
րան այս կարգի մարդկանց, որ Միւնդների ամրող դպրոցը
ինչպէս և իր շրջանի ծանօթները Բաղեն-Բաղենում և Ստրաս-
րուրգում համարում էին յետադէմ: Երկու տարի էր, ինչ նա
ապրում էր հակասութիւնների մթնոլորտում: Դէպի իւրային-
ները՝ նա իրար հակառակ զգացմունքներ էր տածում: Այսպէս
օրինակ, նա իսկապէս սիրում էր մօրը, միւնոյն ժամանակ
խղճում, որ նա պատկանում է մի դատապարտուած սերնդի,
ինչպէս մի անցած դարի: Նա սրտակիցներ չունէր: Ժանը, իր
եղբայրը, արդեօր կը հասկանմը նրան: Նա անհանգիստ էր
նրա գալստեան առթիւ, ինքը նրան միհանգամայն անծանօթ
էր, միւնոյն ժամանակ սէր էր վնդուում, և յոգնած էր ըն-
տանեկան կախներից: յոյս ունէր նաև որ ժանը նրա կողմը
կը բռնէր, և կը դանար նրա համար մի յենարան, մի նոր
փաստ: Ահա թէ ինչժե, նա և՛ շտապում էր տեսնել եղբօրը և՛
երկիւղ էր կրում: Հայրը նրան հաղորդել էր ժանի հետ ունե-
ցած իր խօսակցութիւնը: Եւ նա պատասխանել էր, համարեա
ճշալով՝ «Ծնորհակալ եմ, որ եղբօրս տալիս ես ինձ:»

Նրանք չորսով նստել էին սեղան, երբ ներս մտաւ երի-
տասարդու:

Երկու կանայք, որոնք իրար դէմ տեղ էին բռնել լուսա-
մուտից թափուող լոյսի տակ, զլուխները դարձրին, մէկը մեղ-
միւ և այնպիսի ժպիտով, որ կարծես ուզում էր ասել: «Ա՛յ
ինչպէս հպարտ եմ ես իմ զաւակով»: Միւսը յետ ընկած աթո-
ռի թիկունքին, զրթունքները կիսաբաց, հայեացը քնքոյշ,

ասես մտնողը իր նշանածը լինէր, նրան դուր գալու ցանկութեամբ բռնուած և վստահ, որ դուր կը գայ ասաց բարձրածայն. «Արի այստեղ, նստիր ինձ մօտ, սեղանի ծայրին: Նայի՛ր, ես գեղեցկացրել եմ ինձ քո պատուինս: Եւ նրան համբուրելով՝ աւելացրեց ցած ծայնով! «Տէր Աստուած, ի՞նչ լաւ է, երբ կարող ես մի ջահիլ մարդու բարեւ ասեր: Երիզներով մէջ ընդ մէջ զարդարուած իր կապոյտ մետաքսեայ կորսամի մէջ նա գիտէր աչքի դուրեկան զառնալ: Նա խիստ ուրախ էր տեսնելով եղրօրը, որի վրայ նախընթաց օրը, երբ ինքը Ստրաստրուրդ էր մեկնում, հաղիւ կարողացել էր աչք ձգել. Փանը նրան շնորհակալութիւն յայտնեց իր սիրալիր ու երջանիկ հայեացքով և նստեց սեղանի ծայրին մօտ և քրոջ մէջտեղը և բաց արեց իր անձեռոցիկը: Մօտիցաւ սպասաւոր Վիկառը, ալզաւեան մի գիւղացու որդի, լուսնի պէս կոլոր դէմքով, փորբիկ աղջկայ աչքերով, որ միշտ վախենում էր մի բան սխալ անել, մօտեցաւ նրան կերակըով լի ամանը ձեռքին, երբ ժողեփ Օբերլէն, նշանակելով ինչ որ իր ծոցատետրում, քաշեց իր երկու ֆավորիտները և ասաց.

—Տեսնում էր ժան Օբերլէն, հայր, Մանիկ և դու, Լիւսիչն. նրա մասին ձեզ նորութիւն ունիմ հաղորդելու: Ես թոյլ տուի նրան ապրել Ալշհէյմում վերջնականապէս և դառնալ փայտավաճառ:

Երեք դէմքեր միանգամից կարմրեցին: Նոյնիսկ Վիկառը տերեկի պէս դողալով յետ քաշեց ամանը:

—Միթէ, ասաց Լիւսիչնը, որը չէր կամենում մօրը ցոյց տալ, թէ ինքը արդէն գիտէ այդ. միթէ նա չպիտի վերջացնի պաշտօնի թիկնածութեան համար նշանակուած ծառայութիւնը.

—Ոչ.

—Իր կաժաւոր զինուորութիւնից յետոյ ուրեմն նա յետ կը գայ այստեղ ընդմիշտ:

—Այն, ընդ միշտ մեզ հետ:

Երբեմն յուզմոնքի երկրորդ վայրկեանը աւելի անտանելի է, քան առաջինը:

(Կը շարունակուի)